Տղամարդկանց և կանանց դերի մասին պատկերացումները հասարակական կյանքում

Ա. Տ.Կնյազյան

Երևանի պետական համալսարան
Corresponding authors. E-mail: annaknyazyan@ysu

Paper received 17.02.20; Accepted for publication 18.03.20.

https://doi.org/10.31174/SEND-HS2020-231VIII39-16

Ամփոփագիր: Սեռի սոցիալ և մշակութային պայմանավորվածության ընդունումը թույլ է տալիս առնականությանը և կանացիությանը վերաբերվել ոչ որպես անփոփոխ բնության երևույթի, այլ որպես մարդկային հասարակության դինամիկ փոփոխական արդյունքի, որը ենթարկվում է մշակույթի և հասարակության մոդելավորման: Առկա տեսագործնական նյութի քննական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գենդերային հայեցակարգի դիտարկման շրջանակներում հիմնական շեշտը դրվում է տղամարդու և կնոջ ոչ թե բնական, կենսաբանական տարբերությունների վրա, որոնք ի սկզբան է կանխատեսված են նրանց ֆիզիոլոգիական յուրահատկություններով, այլև նրանց սոցիալական հետաքրքրությունների, պահանջմունքների և վարքագծի վրա՝ չանտեսելով նաև գենդերային հատկանիշների սերտ կապը հանրամշակութային յուրահատկությունների հետ: Ենթադրվում է, որ գենդերային կարծրատիպերը առաջանում են կանանց և տղամարդկանց զբաղեցրած տարբեր դերերից:

Բանալի բառեր. *գենդեր; գենդերային դեր; կին; տղամարդ; կարծրատիպ; արականություն; իգականություն:*

Հանրույթի բաժանումը երկու խմբի՝ տղամարդկանց և կանանց, մշտապես գոյություն է ունեցել մարդկային հասարակության մեջ, յուրաքանչյուր անհատի համար ամրագրվել է տղամարդու կամ կնոջ գենդերային դեր: Հետագայում դրա հիման վրա ձևավորվել են տղամարդկանց և կանանց վարքագծային առանձնահատկությունների, նրանցից ակնկալվող արձագանքների և գործողությունների՝ միայն տղամարդկանց կամ միայն կանանց համար ընդունելի գործունեության տեսակների վերաբերյալ որոշ ընդհանրական պատկերացումներ, որոնք հասարակական գիտակցության մեջ ամրակայվել են որպես գենդերային կարծրատիպեր և կարևոր դեր են խաղում հանրույթի և դրանում մարդու գործունեության ընթացքում: Գենդերային հետազոտությունների ուշադրության կենտրոնում են սոցիալական և մշակութային գործոնները, որոնք պայմանավորում են հասարակության վերաբերմունքը տղամարդկանց և կանանց նկատմամբ, անհատների վարքը՝ այս կամ այն սեռի պատկանելու առումով, կանանց և տղամարդկանց հատկությունների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները, այսինքն՝ այն ամենը, ինչը սեռի հիմնախնդիրը փոխադրում է կենսաբանության ոլորտից կյանքի սոցիալական և մշակութային ոլորտներ: Կանանց և տղամարդկանց բնորոշ գենդերային դերերը տարբերվում են բոլոր մշակույթներում: Գենդերային տարբերություններին վերաբերող որոշ կարծրատիպային պատկերացումներ համընդհանուր են բոլոր մշակույթների համար. դրանցից են ագրեսիվության, ուժի վերաբերյալ պատկերացումները՝ որպես տղամարդկանց տարբերակիչ առանձնահատկություն, ինչպես նաև թուլությունը, հնազանդությունը և զգացմունքայնությունը՝ որպես կանանց բնորոշ հատկություններ: Սակայն գենդերային հետազոտությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր հանրամշակույթներին են հատուկ գենդերային տարբերությունների միևնույն դրսևորումները:

Սույն հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված են այն հանգամանքով, որ հատկապես վերջին տարիներին <<գենդեր>> եզրույթը ակտիվորեն շրջանառվում է, քանի որ գենդերային փոխհարաբերությունների համաչափ զարգացումը լիակատար կերպով համահունչ է ընդհանուր ժողովրդա- վարացման գործընթացին: Քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի համ- ընդգրկուն տեղաշարժերի հետևանքով, շոշափելիորեն խորանում է գենդերային փոխհարաբերությունների անհամաչափությունը հասարակական կյանքում, որն էլ իր դրսևորումն է գտնում քաղաքական, իրավական, հոգեբանական, տնտեսական, սոցիալական, մշակութային, լեզվական և այլ ոլորտներում: Ուստի գենդերային տարբերությունների ուսումնասիրության խնդիրը առավել արդիական է դառնում, և գենդերային հավասարության պահպանումը առաջնա- հերթ է հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացման համար: Գենդերային փոխհարաբերությունները ներազդում են ինչպես մշակույթի, լեզվի, սովորույթների, այնպես էլ հասարակական կառույցների, պետական

 ©A. T. Knyazyan 2020

հաստատությունների կողմից որոշումների ընդունման վրա և ձևավորում հանրամշակութային կարծրատիպեր: Հետազոտության արդիականությունը նաև պայմանավորված է գենդերային գիտելիքների տարածման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման, անհրաժեշտությամբ:

Կարծրատիպային ընկալումներում տղամարդը սովորաբար հանդես է գալիս որպես ակտիվ, հանրային-ստեղծագործական սկզբնադիր, իսկ կինը՝ պասիվ: Հակոտնյա են տղամարդկանց ու կանանց վերագրվող հանրային դերերը: Առաջինները առավելապես <<գործիքային>> են, իսկ վերջինները՝ <<արտահայտչական>>: Տղամարդը <<կերակրողն>> է և ընտանիքում իրականացնում է ընդհանուր ղեկավարումը, իսկ կինը պարտավոր է կատարել ընտանեկան-կենցաղային պարտականությունները և ապահովել տան հոգեկան ջերմությունը, հարմարավետությունը: Այս թվարկումից արդեն իսկ հետևում է, որ խոսքը ոչ միայն պարզապես տղամարդկանց և կանանց միջև գործառույթների բաշխման մասին է, այլև ստորակարգության, կնոջ՝ տղամարդուն ենթարկվելու մասին [3,4]: Վերլուծելով կնոջ կերպարը պատմության ընթացքում՝ Ջ. Հանտերը եզրակացրել է, որ ընդհանուր առմամբ դա ոչ լիարժեքության կերպար է, իսկ կնոջ ազատագրման գործընթացը դեռևս վաղ անտիկ շրջանից ուղղակիորեն կապվում էր ապակառուցողական սոցիալական հետևանքների, բարոյականության անկման և ընտանիքի քայքայման հետ[5]:

Ամփոփելով հասարակության մեջ տղամարդկանց և կանանց դերի մասին գոյություն ունեցող ավանդական պատկերացումները՝ Ռ. Ռ. Վերման նշում է, որ կնոջ էությունը ավելի հաճախ բնութագրվել է հետևյալ յուրահատկություններով.

- կինը ոչ լիարժեք և կախման մեջ գտնվող էակ է,
- կինը տղամարդուց ավելի ցածր էակ է, քանի որ նրան հատուկ են ծայրահեղ սահմանափակվածությունն ու թուլությունը,
- կինն իր ներքին էությամբ արժեք չունի,
- կնոջ հիմնական կոչումը տղամարդուն ծառայելն ու նրան օգտակար լինելն է, սեռական զուգընկերության և մայրության համակարգից դուրս նրա գոյությունն անիմաստ է և երկրորդական նշանակություն ունի,
- կինը ինքնըստինքյան, անձնազոհ է, սիրող, համբերատար, քնքուշ և զգացմունքային, որոնք և նրա ամենամեծ առաքինություններն են[10]:

Վաղուց ի վեր հայտնի է, որ յուրաքանչյուր կոնկրետ հասարակության կազմակերպվածության գործում մեծ նշանակություն ունի սեռերի դերաբաշխումը: Յուրաքանչյուր սեռի առանձնահատկության մասին պատկերացումները կախված են տվյալ հասարակության մշակույթի տեսակից, գիտելիքների մակարդակից և գաղափարախոսական հիմքից: Կարելի է վստահորեն ասել, որ XIX դարի սկզբից մինչև 1960-ական թթ. Արևմուտքում գոյություն ունեցող սեռերի դերաբաշխումը, եզակի բացառություններով, չի փոփոխվել: Այդ ժամանակաշրջանին բնորոշ էր տղամարդկանց և կանանց գործառույթների հստակ տարանջատումը, որը երբեմն կոշտ ստորակարգային նմուշ-օրինակի շրջանակներում հանգում էր անզիջում երկվության [11]:

Աշխարհի բաժանումը սեռային հատկանիշով (հասարակական և մասնավոր կյանքում) հանգեցրեց կանանց և տղամարդկանց նկատմամբ երկու դիրքորոշումների, որոնք բնութագրվում էին նրանց յուրահատուկ գծերով: Տնային մեկուսացման մեջ լինելով՝ կինը վարում էր տնտեսությունը, մեծացնում երեխաներին, պահպանում ընտանեկան օջախը: Դրա համար նրան անհրաժեշտ չէին համարձակություն, պատվասիրություն, վճռականություն, նախաձեռնողականություն: Տղամարդը, ընդհակառակը, ամեն օր գոյության կռիվ տալով՝ պետք է չզիջեր իր սեռի այլ ներկայացուցիչներին, ուստի իր մեջ դաստիարակում էր հատկություններ, որոնք նրա համար բնական էին համարվում[1]:

Ներկայումս այդ պատկերացումներից շատերը կորցրել են իրենց ուժը, այսինքն՝ դարձել են նախապաշարմունքներ, սակայն տղամարդկանց և կանանց կոչման մասին հարցն, ինքնըստինքյան, չի կորցրել իր հետաքրքրությունը: Այսպես, ցայսօր քննարկման թեմա է այն, թե կինը կարող է արդյոք արդյունավետ առաջնորդի դեր կատարել ընտանիքում և արտադրության մեջ: Հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը խանգարում են այս հարցի անաչառ լուծմանը և կարող են բացասական դեր կատարել՝ մեծապես աղավաղելով իրական պատկերը: Առաջին բացասական ազդեցությունն այն է, որ տղամարդկանց և կանանց կերպարների՝ գոյություն ունեցող կարծրատիպերը գործում են խոշորացույցի պես, և տղամարդկանց ու կանանց միջև տարբերությունները էլ ավելի են ընդգծվում, քան կան իրականում: Գենդերային կարծրատիպերի երկրորդ բացասական ազդեցությունը միևնույն իրադարձության տարբեր մեկնաբանություններն ու գնահատականներն են՝ պայմանավորված, թե որ սեռին է պատկանում այդ իրադարձության մասնակիցը [1]:

Արականության և իգականության մասին պատկերացումները և նրանց բնորոշ հատկությունները տեղ ունեն յուրաքանչյուր մշակույթում. դրանց էական տեղ է տրվում ծիսակարգերում, բանահյուսության մեջ, առասպելաբանական գիտակցության մեջ: Այս

ամենով հանդերձ՝ գենդերի կարծրատիպականացումը և արժեքային սանդղակը տարբեր մշակույթներում միանման չեն: Տղամարդկանց և կանանց սոցիալական դերերը որպես կանոն, կանոնակարգված են: Տարբեր մշակույթներում մարդու միևնույն գործողություններին, կախված նրա սեռից, տրվում է տարբեր բովանդակություն. միևնույն բովանդակությունը տարբեր կերպ է դրսևորվում արարքներում [7]: Կարծրատիպը վարքի ծրագրի դեր է կատարում: Կարծրատիպերը դիտարկվում են որպես տեղեկատվության մշակման հատուկ ձևեր, որոնք դյուրացնում են մարդու կողմնորոշումն աշխարհում: Կարծրատիպերում պարունակվող հատկանիշները մարդիկ օգտագործում են առարկաների այս կամ այն դասի պատկանելությունը գնահատելու և դրանց որոշակի բնութագրեր վերագրելու համար: Ծնողների կողմից իրենց երեխաների ընդունակությունները գնահատելիս Ջ. Էքըլզը ցույց է տվել, որ ծնողները, ելնելով գոյություն ունեցող կարծրատիպից, տղայի մաթեմատիկական ընդունակությունները ավելի բարձր են գնահատել, քան դստեր, նույնիսկ այն դեպքում, երբ նրանց առաջադիմությունը նույնն էր: Ծնողները մաթեմատիկայից տղաների բարձր առաջադիմությունը բացատրում են նրանց ընդունակություններով, իսկ դուստրերի նույն առաջադիմությունը՝ ջանասիրությամբ [2]:

Ընդ որում, դժվար չէ նկատել. այն, ինչ մի հասարակության մեջ տղամարդկանց բնորոշ է համարվում, մեկ ուրիշում կարող է վերագրվել կանանց: Դեռևս 1930-ական թթ. ամերիկացի հայտնի մարդաբան Մարգարետ Միդը ցույց տվեց, թե ինչպես են տարբեր կերպ սահմանվում իր հետազոտած հասարակություններում մոր և հոր դերերը, հասարակական ստորակարգությունում տղամարդկանց և կանանց դիրքերը [6]:

Գենդեր հասկացությունը, ըստ էության, նաև բարդ հանրամշակութային երևույթ է՝ հասարակության կողմից տղամարդու և կնոջ դերերի, վարքի, հոգևոր և հուզական բնութագրերի տարբերությունների շրջանառման, և բուն արդյունքի՝ գենդերի սոցիալական կառուցատարրի առումով: Գենդերային տարբերությունների ձևավորումը տեղի է ունենում ըստ որոշակի համակարգի (որը տղաների ու աղջիկների մեջ դաստիարակում է տարբեր հմտություններ և հոգեբանական հատկություններ), տղամարդկանց և կանանց միջև աշխատանքի բաժանման և հասարակության մեջ մշակութային նորմերի, դերերի ու կարծրատիպերի ընդունման միջոցով (օրինակ՝ սպորտը առավելապես տղամարդկային գործունեության ոլորտ է): Ընդ որում, գենդերային դերերն ու նորմերը չունեն համակողմանի բովանդակություն և տարբեր հասարակություններում զգալիորեն տարբերվում են: Այդ իմաստով տղամարդ կամ կին լինել բնավ չի նշանակում բնությունից տրված որոշակի հատկություններով օժտված լինել, այլ նշանակում է կատարել քեզ վերապահված գենդերային դերը և համապատասխանել որոշակի ձևանմուշների [9]: Արդի ժամանակաշրջանում միջմշակութային ոլորտում տղամարդկանց և կանանց հոգեբանական գծերի (գենդերային կարծրատիպերի) տարբերությունների հետ կապված առավել ընդգրկուն նյութ են ներկայացնում հոգեբաններ Ջոն Վիլյամսը և Դեբորա Բեսթը իրենց գրքում՝ “Measuring Sex Stereotypes: A Thirty-Nation Study”: Այն սկսվում է հետևյալ պնդմամբ. <<Պատկերացրե՛ք, որ խոսում եք ձեր ընկերոջ հետ, որը նկարագրում է ձեզ անծանոթ երկու մարդու: Մեկի մասին ասում է, որ նա համարձակ է, իշխող, կոպիտ, տիրակալ, անկախ և ուժեղ, մինչդեռ մյուսը բնութագրվում է որպես նուրբ, կախյալ, երազկոտ, հուզական, զգայուն, խեղճ ու թույլ: Եթե ձեզ համար դյուրին է առաջին մարդուն տղամարդ պատկերացնել, իսկ երկրորդին՝ կին, ապա դուք հենց նոր դրսևորեցիք սեռային հատկանիշների կարծրատիպերի իմացություն: Արդյոք նշանակություն ունի՞ ձեր ազգությունը: Ավելի շուտ՝ ոչ: Դուք կարող էիք լինել Կանադայից, Պերուից, Նիգերիայից, Պակիստանից կամ Ճապոնիայից: Բոլոր այդ երկրներում առաջին խմբում ներառված գծերը առավելապես բնորոշ են համարվում տղամարդկանց, քան կանանց, իսկ երկրորդում ընդգրկված հատկանիշները, ավելի բնութագրական են կանանց, քան տղամարդկանց համար>> [8:120]:

Ենթադրվում է, որ գենդերային կարծրատիպերը առաջացել են աշխատանքի ի հայտ եկած բաժանումը հիմնավորելու համար: Ըստ այդմ էլ երեխաներին տարբեր կերպ են հանրայնացնում՝ նրանց նախապատրաստում են տարբեր գենդերային դերերի համար: Ընդ որում՝ աշխատանքի բաժանումը՝ ըստ սեռային հատկանիշի՝ հավանաբար առաջացել է կանանց և տղամարդկանց ֆիզիկական տարբերությունների հետևանքով: Ուրիշ խոսքով՝ ըստ գենդերային գործոնի, մարդուն՝ այս կամ այն խմբին դասելը առկա է յուրաքանչյուր մշակույթում, որն ավելի շուտ բացատրվում է աշխատանքի, ըստ սեռային հատկանիշի բաժանմամբ և գենդերային տարբերությունները խրախուսող մշակութային նորմերի հաստատմամբ:

Այսպիսով՝ գենդերային կարծրատիպերն առաջանում են տղամարդկանց և կանանց տարբեր դերերի հիման վրա: Կայացած կարծրատիպերը կանանց և տղամարդկանց համար հանդես են գալիս որպես նորմեր և գենդերային-սեռային հանրայնացման համար նմուշ-օրինակներ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Badinter Élisabeth. The Conflict: How Modern Motherhood Undermines the Status of Women. Translated from Le Conflit by Adriana Hunter. Publisher: Holt, Henry & Company, Inc., 2012. 224p.
2. Eccles J. S. Sex Differences In Mathematics Participation // M. L. Maehr, M. W. Steinkamp (eds.). Women in science: Advances in motivation and achievement. Greenwich, CT, JAI Press, 1984, v. 2.p. 89-100.
3. Eckes T. Features of Men. Features of Women: Assessing Stereotypic Beliefs About Gender Subtypes // British Journal of Social Psychology. London, 1994, № 33, p.107 123.
4. Parsons T. Family, Socialization and Interaction Process. London: Routledge, 1956. p. 422.
5. Hunter J. E. Images of Women // Journal of Social Issues, 1976. № 32. p.7-17.
6. Mead M. Sex and Temperament In Three Primitive Societies. N.Y., Morrow, 1935. 335 p.
7. Welch M. R., Page B. M. Sex Differences In Childhood Socialization Patterns In African Societies. Sex Roles.Washington, 1981. № 7 p. 163-1173.
8. Williams J. E., & Best D. L. Measuring Sex Stereotypes: A Thirty-Nation Study (rev. ed.). Beverly Hills: Sage, 1990. 250 p.
9. Williams J. E., Best D. L. Sex Stereotypes and Intergroup Relations // S. Worshel, W. G. Austin (eds.). Psychology of intergroup relations. Chicago: Nelson-Hall. 1986, p. 244-259.
10. Верма Р. Р. Отсутствующая личность. // Феминизм: восток, запад, Россия. М.: Наука, 1993. С.146-156
11. Ильин Е. П. Пол и гендер. С-Пб: Питер, 2010. 688с.

REFERENCES

1. Badinter Elizabet. Konflikt: kak sovremennoye materinstvo podryvayet status zhenshchin. Perevod Adriany Khanter iz Le Conflit. Izdatel'stvo: Kholt, Genri I Kompaniya, Inc., 2012. 224 s
2. Ekls Dzh. S. Polovyye razlichiya v matematicheskom uchastii // M. L. Mayer, M. V. Steynkamp (red.). Zhenshchiny v nauke: dostizheniya v motivatsii i dostizheniyakh. Greenwich, CT, JAI Press, 1984, v. 2.p. 89-100
3. Ekes T. Osobennosti muzhchin. Osobennosti zhenshchin: otsenka stereotipnykh predstavleniy o gendernykh podtipakh // Britanskiy zhurnal sotsial'noy psikhologii. London, 1994, № 33, s.107 123.
4. Parsons T. Sem'ya, sotsializatsiya i protsess vzaimodeystviya. London: Routledge, 1956. s. 422
5. Khanter Dzh. E. Obrazy zhenshchin // Zhurnal sotsial'nykh problem, 1976. № 32. s.7-17
6. Mid M. Seks i temperament v trekh pervobytnykh obshchestvakh. N.YU., Morrou, 1935.
7. Uelch M. R., Peydzh V. M. Polovyye razlichiya v modelyakh sotsializatsii detstva v afrikanskikh obshchestvakh. Polovyye roli. Vashington, 1981. № 7 s. 163-1173.
8. Uil'yams Dzh. E. i Best D. L. Izmereniye polovykh stereotipov: issledovaniye tridtsatiletiya (red. Red.). Beverli-Khillz: Mudrets, 1990. 250 s.
9. Uil'yams Dzh. E., Best D. L. Polovyye stereotipy i mezhgruppovyye otnosheniya // S. Vorshel', V. G. Ostin (red.). Psikhologiya mezhgruppovykh otnosheniy. Chikago: Nel'son-Kholl. 1986, s. 244-259.
10. Verma R. R. Otsutstvuyushchaya lichnost'. // Feminizm: vostok, zapad, Rossiya. M.: Nauka, 1993. S.146-156
11. Il'in Ye. P. Pol i gender. S-Pb: Piter, 2010. 688s.

Perceptions of the Roles of Men and Women in Society

A. T. Knyazyan

Abstract. Gender is one of the important categories of social life, manifested in everyday reality. Representatives of one gender are presented with a special set of behavioral norms and expectations, significantly different from the requirements for the other sex. Social ideas about men and women relate to the norms of their social behavior and psychological qualities. The division of society on the basis of sex led to the appearance of two opposing attitudes towards men and women, which determine their specific features. The specificity of the gender system lies in the fact that it is an integral characteristic of any society, since any society regulates the relations between the sexes.